

*Համարը*  
*Տիպը* Համաձայնագիր  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԱԳՆՊՏ 2015.12.30/4(34)  
*Ընդունող մարմինը* Հայաստանի  
Հանրապետություն

*Ստորագրող մարմինը*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 13.11.2015

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Վաշինգտոն  
*Ընդունման ամսաթիվը* 07.05.2015

*Ստորագրման ամսաթիվը* 07.05.2015  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը (առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

*ցանկանալով* խորացնել բարեկամական կապերը և համագործակցության ոգին, ընդլայնել առևտուրը և ամրացնել Կողմերի միջև տնտեսական հարաբերությունները,

*գիտակցելով* միջազգային առևտրի և ներդրումների համար բաց և կանխատեսելի միջավայրի խրախուսման կարևորությունը,

*գիտակցելով* օգուտները, որ Կողմերը կարող են ձեռք բերել ընդլայնվող միջազգային առևտրից և ներդրումներից, և որ առևտուրը խաթարող ներդրումային միջոցներն ու հովանավորչական առևտրային արգելքները կարող են նվազեցնել այդ օգուտները,

*ձգտելով* խթանել թափանցիկությունը և վերացնել կաշառակերությունն ու կոռուպցիան միջազգային առևտրում և ներդրումներում,

*գիտակցելով* ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա մասնավոր ներդրումների էական դերը՝ աճի ապահովման, աշխատատեղերի ստեղծման, առևտրի ընդլայնման, տեխնոլոգիաների բարելավման և տնտեսական զարգացման ընդլայնման գործում,

*գիտակցելով* իրենց տնտեսությունների միջև ծառայությունների առևտրի աճող կարևորությունը,

*հաշվի առնելով* Կողմերի միջև ընդլայնված առևտրի դյուրացման նպատակով ոչ սակագնային առևտրային արգելքների նվազեցման ցանկալիությունը,

*գիտակցելով* մտավոր սեփականության իրավունքներին համապատասխան և արդյունավետ պաշտպանության ու կիրառման, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքների կոնվենցիաներին անդամակցելու և հավատարիմ մնալու կարևորությունը,

*գիտակցելով* ԱՄԿ՝ «Աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքների և իրավունքների հռչակագրում և դրա իրականացման մեխանիզմում» (1998) թվարկված հիմնարար աշխատանքային իրավունքները յուրաքանչյուր Կողմի օրենքներում և գործելակերպում հարգելու, խթանելու և իրականացնելու, ինչպես նաև ապահովելով Կողմերի համապատասխան աշխատանքային օրենքների արդյունավետ կիրարկումը,

*գիտակցելով* Կողմերի բնապահպանական օրենքներին համապատասխան, շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանման, ինչպես նաև Կողմերի բնապահպանական օրենքների արդյունավետ

կիրառման ապահովման կարևորությունը, և ցանկանալով ապահովել, որ առևտրատնտեսական և շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունները երկուստեք աջակցեն համագործակցության հետագա զարգացմանը,

*գիտակցելով*, որ տեղական և գլոբալ տնտեսության մեջ կանանց, ներառյալ աշխատող կանանց, ձեռնարկատերերի և ձեռնարկությունների սեփականատերերի մասնակցության հնարավորությունների ընդլայնումը նպաստում է տնտեսական զարգացմանը, ինչպես նաև՝ ներքին և գլոբալ տնտեսության մեջ մասնակցության հարցում գեներելով պայմանավորված արգելքների բացառման կարևորությունը,

*ցանկանալով* միմյանց տարածքներում խրախուսել և դյուրացնել կապերը ձեռնարկությունների և մասնավոր հատվածի այլ խմբերի միջև,

*գիտակցելով* նրանց միջև առևտրային և ներդրումային խնդիրների հնարավորինս արագ լուծման ցանկալիությունը,

*ցանկանալով* ամրապնդել բազմակողմ առևտրային համակարգը՝ Առևտրի Համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում հետագա երկուստեք և փոխշահավետ համաձայնությունների կողմ դառնալով,

*նկատի առնելով*, որ Կողմերը ԱՀԿ-ի անդամ են, և հաստատելով, որ սույն Համաձայնագիրը չի վնասում Կողմերի՝ ԱՀԿ-ին առնչվող կամ դրա շրջանակներում կնքված համաձայնագրերով, համաձայնություններով և այլ փաստաթղթերով ստանձնած իրավունքներին և պարտականություններին,

*նկատի ունենալով* «Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության միջև Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» պայմանագիրը, Կողմերի միջև ստորագրված 1992թ. սեպտեմբերի 23-ին, և հաստատելով, որ սույն Համաձայնագիրը չի վնասում Պայմանագրով ստանձնած՝ Կողմերի իրավունքներին և պարտականություններին,

*ձգտելով* համագործակցության խորացման և ավելի համապարփակ համաձայնագրերի միջոցով ստեղծել առևտրատնտեսական նախաձեռնությունների ընդլայնման հետագա երկխոսության մի մեխանիզմ,

համաձայնեցին հետևյալի մասին.

### **Հոդված 1**

Կողմերը հաստատում են իրենց ցանկությունը՝ Կողմերի միջև խթանել գրավիչ ներդրումային միջավայրը և ընդլայնել ու բազմազան դարձնել ապրանքների ու ծառայությունների առևտուրը:

### **Հոդված 2**

1. Կողմերը սույնով հիմնում են Միացյալ Նահանգներ-Հայաստան՝ Առևտրի և ներդրումների խորհուրդ (Խորհուրդ)՝ կազմված յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից: Հայաստանի կողմից պետք է նախագահի Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ Միացյալ Նահանգների կողմից պետք է նախագահի՝ ԱՄՆ Առևտրի ներկայացուցչի գրասենյակը («ԱՄՆԱՆ»): Կողմերին, ըստ անհրաժեշտության, կարող են աջակցել իրենց կառավարությունների ներկայացուցիչները:

2. Խորհուրդը պետք է հանդիպի Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում, վայրերում և միջոցներով: Կողմերը պետք է ձգտեն հանդիպել ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

### **Հոդված 3**

Խորհուրդը պետք է՝

1. վերահսկի Կողմերի միջև առևտրային և ներդրումային հարաբերությունները, պետք է բացահայտի առևտրի և ներդրումների ընդլայնման հնարավորությունները, պետք է բացահայտի համապատասխան հարցերը, ինչպիսիք են օրենքի գերակայության ապահովումն ու թափանցիկ և կոռուպցիայից զերծ հանրային հաստատությունների խթանումը, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, աշխատողների իրավունքները, ինչպես նաև շրջակա միջավայրը՝ որոնց շուրջ նպատակահարմար է բանակցել համապատասխան ֆորումում.

2. քննության առնի Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող՝ առևտրային և ներդրումային կոնկրետ խնդիրներ.

3. բացահայտի և աշխատի վերացնել Կողմերի միջև առևտրի և ներդրումների խոչընդոտները, և

4. անհրաժեշտության դեպքում, Խորհրդի աշխատանքներին վերաբերող հարցերով, Խորհրդատվության կարգով դիմի մասնավոր հատվածին և քաղաքացիական հասարակությանը:

#### **Հոդված 4**

Կողմերից մեկը կարող է դիմել Խորհրդին առևտրին կամ ներդրումներին առնչվող կոնկրետ խնդրով՝ մյուս Կողմին խնդրի նկարագրությամբ գրավոր հարցում կատարելով: Խորհուրդը, հարցումը ստանալուց հետո անհապաղ պետք է այն քննարկի, եթե հարցում ներկայացնող Կողմը չհամաձայնի հետաձգել հարցման քննարկումը: Կողմերից յուրաքանչյուրը պետք է ջանա Խորհրդին հնարավորություն տալ քննության առնել ցանկացած խնդիր՝ նախքան որոշումներ կայացնելը, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ մյուս Կողմի առևտրական կամ ներդրումային շահերի վրա:

#### **Հոդված 5**

Սույն Համաձայնագիրը չի վնասում երկու Կողմերի օրենսդրությամբ կամ որևէ այլ համաձայնագրով Կողմերի ստանձնած իրավունքները և պարտականությունները:

#### **Հոդված 6**

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են գրավոր փոփոխել և լրացնել սույն Համաձայնագիրը: Ցանկացած այդպիսի փոփոխություն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը միմյանց կժամուցեն, որ իրենք ավարտել են պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ցանկացած ներքին ընթացակարգերը: Եթե Կողմերը միմյանց այդպիսի ծանուցում են ներկայացնում տարբեր օրերի, ապա փոփոխությունը ուժի մեջ կմտնի վերջին ծանուցման ստացման օրը:

#### **Հոդված 7**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը միմյանց կժամուցեն, որ իրենք ավարտել են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ ներքին ընթացակարգերը: Եթե Կողմերը միմյանց այդպիսի ծանուցում են ներկայացնում տարբեր օրերի, ապա Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցման ստացման օրը:

#### **Հոդված 8**

Ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ դադարեցնելու մասին գրավոր ծանուցում ներկայացնելով մյուս Կողմին: Սույն Համաձայնագիրը դադարեցվում է Կողմերի միջև համաձայնեցված օրը կամ, եթե Կողմերը չեն կարող համաձայնվել՝ գրավոր ծանուցումից 180 օր հետո:

Ի ՎԿԱՅՈՒՄՆ ՎԵՐՈՂ ՆՇՎԱԾԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է անգլերեն լեզվով, բնագիր տեքստի երկու օրինակով՝ Վաշինգտոն քաղաքում, Կ. Շ., 2015թ. մայիսի 7-ին: Համաձայնագրի հայերեն լեզվով տարբերակը կպատրաստվի և կհամարվի Համաձայնագրին հավասարազոր բնագիր տեքստ՝ Կողմերի միջև Համաձայնագրի անգլերեն լեզվով ստորագրված տեքստին հայերեն լեզվով տարբերակի համապատասխանությունը հաստատող նամակների փոխանակմամբ:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015թ. նոյեմբերի 13-ին*